

**«Արդշինհնվեստբանկ»  
Փակ բաժնետիրական ընկերություն**

**Անկախ աուդիտորի հաշվետվությունը**

**Ֆինանսական հաշվետվություններ  
2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Բանկի ղեկավարության կազմը.....	3
Բանկի ղեկավարության պատասխանատվությունը.....	4
Անկախ աուդիտորի հաշվետվությունը.....	5
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Հաշվապահական հաշվեկշիռ .....	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10

## **Բանկի ղեկավարության կազմը**

---

Տվյալ ֆինանսական հաշվետվությունների ստորագրման պահին Բանկի ղեկավարության կազմը հետևյալն էր.

### **Բանկի խորհուրդ**

Կարեն Սաֆարյան  
Խաչատուր Զաքարյան  
Արամ Անդրեասյան  
Ռուդիկ Սկրտունյան

Բանկի խորհրդի նախագահ  
Խորհրդի անդամ  
Խորհրդի անդամ  
Խորհրդի անդամ

### **Գործադիր մարմին**

Արամ Անդրեասյան  
Օլգա Գասպարյան  
Սերգեյ Վիրաբյան  
Գուրգեն Հարությունյան  
Մանվել Սահակյան  
Կարեն Զանինյան  
Կարեն Բոզոյան

Վարչության նախագահ  
Վարչության նախագահի տեղակալ  
Վարչության նախագահի տեղակալ  
Վարչության նախագահի տեղակալ  
Գլխավոր հաշվապահ  
Վարչության պետ  
Վարչության պետ

## **Բանկի ղեկավարության պատասխանատվությունը**

---

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ նպատակով նրանցից պահանջվում է.

- ընտրել հաշվապահական հաշվառման քաղաքականություն և հետևողականորեն կիրառել այն,
- կատարել հիմնավորված գնահատումներ,
- պատրաստել ֆինանսական հաշվետվությունները Բանկի գործունեության անընդհատության հիման վրա, եթե Բանկի ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար, որոնք արժանահավատորեն ներկայացնում են Բանկի ֆինանսական վիճակը: Նրանք պատասխանատու են միջոցներ ձեռնարկել Բանկի ակտիվների ապահովման, խարդախությունների և այլ անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ:

Երևան

*08 փետրվարի 2005թ.*

**Արամ Անդրեասյան**

*Բանկի վարչության նախագահ*

**Մանվել Սահակյան**

*Բանկի գլխավոր հաշվապահ*

## Անկախ աուդիտորի հաշվետվությունը

«Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերին

Մեր կողմից իրականացվել է «Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար, կցված 6-ից 34 էջերում, պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ կազմակերպության կողմից և նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտվել է առանց վերապահումների դրական կարծիք 01 հունիսի 2004թ. հաշվետվությամբ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի ՀՀ ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին համապատասխան:

ԱՌԻԴԻՏՈՐ

/ Հ. Բակլաչյան/

ՏՆՕՐԵՆ

/Ա. Փինարբասի/

Երևան, 08 փետրվարի 2005թ.

**Գրանք Թորմքոն Ամիո ՍՊԸ**

**Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

**2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար  
հազ. ՀՀ դրամ**

	<b>Ծանոթ.</b>	<b>2004թ. (ստուգված)</b>	<b>2003թ. (ստուգված)</b>
Տոկոսային եկամուտներ	4	3,334,670	1,263,809
Տոկոսային ծախսեր	4	(884,382)	(310,458)
<b>Զուտ տոկոսային եկամուտներ</b>		<b>2,450,288</b>	<b>953,351</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	1,260,236	524,635
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(14,385)	(29,473)
<b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>		<b>1,245,851</b>	<b>495,162</b>
Արտարժույթային գործառնություններից և վերագնահատումից զուտ եկամուտ		636,933	193,351
Արժեթղթերում ներդրումներից զուտ եկամուտ		1,312	(12,482)
Այլ գործառնական եկամուտ	6	804,664	491,997
<b>Գործառնական եկամուտ</b>		<b>5,139,048</b>	<b>2,121,379</b>
Մասհանումներ հնարավոր կորուստների պահուստների	7	(154,070)	(268,142)
Այլ գործառնական ծախսեր	8	(2,703,142)	(994,243)
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>2,281,836</b>	<b>858,994</b>
Շահութահարկի գծով ծախս	20	(493,852)	(204,117)
<b>Տարվա շահույթ</b>		<b>1,787,984</b>	<b>654,877</b>

10-ից 34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

**Հաշվապահական հաշվեկշիռ**

*առ 2004թ. դեկտեմբերի 31-ը  
հազ. ՀՀ դրամ*

	<b>Ծանոթ.</b>	<b>2004թ. (ստուգված)</b>	<b>2003թ. (ստուգված)</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	9	7,416,126	4,345,305
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10	5,746,198	1,881,442
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	11	18,545,410	11,231,281
Ներդրումներ արժեթղթերում			
- վաճառքի համար մատչելի	12.1	12,255	12,947
- մինչև մարման ժամկետը պահվող	12.2	2,576,495	1,698,430
Հիմնական միջոցներ	13	3,019,609	1,645,479
Ոչ նյութական ակտիվներ	14	99,433	81,508
Հետաձգված հարկային ակտիվ	20	15,872	6,012
Այլ ակտիվներ	15	226,065	567,808
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>37,657,463</b>	<b>21,470,212</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ</b>			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	1,650,435	445,459
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	17	30,065,192	17,053,912
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		338,029	213,276
Այլ պարտավորություններ	18	214,696	156,438
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>32,268,352</b>	<b>17,869,085</b>
Բաժնետիրական կապիտալ	19	2,946,250	2,946,250
Գլխավոր պահուստ		70,051	-
Չբաշխված շահույթ		2,372,810	654,877
		5,389,111	3,601,127
<b>Ընդամենը կապիտալ և պարտավորություններ</b>		<b>37,657,463</b>	<b>21,470,212</b>

10-ից 34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:  
Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Բանկի վարչության կողմից 2005թ. փետրվարի 8-ին և ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից:

**Արամ Անդրեասյան**

**Մանվել Սահակյան**

*Բանկի վարչության նախագահ*

*Բանկի գլխավոր հաշվապահ*

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար  
հազ. ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
<b>Մնաց. առ 31 դեկ. 2002թ.</b>	-	-	-	-
Բաժնետոմսերի թողարկում	2,946,250	-	-	2,946,250
Տարվա շահույթ	-	-	654,877	654,877
<b>Մնաց. առ 31 դեկ. 2003թ. (ստուգված)</b>	<b>2,946,250</b>	-	<b>654,877</b>	<b>3,601,127</b>
Տարվա շահույթ	-	-	1,787,984	1,787,984
Հատկացումներ պահուստին	-	70,051	(70,051)	-
<b>Մնաց. առ 31 դեկ. 2004թ. (ստուգված)</b>	<b>2,946,250</b>	<b>70,051</b>	<b>2,372,810</b>	<b>5,389,111</b>

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

*2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար  
հազ. ՀՀ դրամ*

	2004թ. (ստուգված)	2003թ. (ստուգված)
<b><u>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</u></b>		
Ստացված տոկոսներ	2,984,463	1,151,686
Վճարված տոկոսներ	(769,839)	(176,011)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	85,484	-
Զուտ հոսքեր արտարժույթային գործառնությունների գծով	736,001	254,952
Ստացված գուտ կոմիսիսոն գումարներ	1,245,851	495,162
Ակտիվների վերականգնում	630,951	-
Այլ եկամուտներ	310,384	450,530
Այլ ծախսեր	(484,827)	(74,766)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(1,039,765)	(749,498)
Վճարված շահութահարկ	(219,050)	-
<b><u>Զուտ դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</u></b>	<b>3,479,653</b>	<b>1,352,055</b>
<b><u>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</u></b>		
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	(98,986)	(52,576)
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	(345,000)	(205,000)
Վարկեր և ավանդներ բանկերում	34,659	(34,659)
Հաճախորդներին տրված վարկեր	(7,445,790)	(6,958,960)
Այլ ակտիվներ	(523,377)	(37,890)
<b><u>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</u></b>		
Ռեպո համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	999,441	-
Բանկերից և ֆինանսական կազմակերպությունների ավանդներ	(162,980)	673,466
Հաճախորդների ավանդներ	12,947,685	6,549,757
Այլ պարտավորություններ	-	23,447
<b>Գործառնական գործունեությունից գուտ դրամական հոսքեր</b>	<b>8,885,305</b>	<b>1,309,640</b>
<b><u>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</u></b>		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	(871,244)	(570,957)
Հիմն. միջոցների և ոչ նյութ. ակտիվների (առք)/վաճառք	(1,617,888)	130,142
Գործառնությունների ձեռք բերում	-	2,191,347
<b>Ներդրումային գործունեությունից գուտ դրամական հոսքեր</b>	<b>(2,489,132)</b>	<b>1,750,532</b>
<b><u>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</u></b>		
Վարկեր բանկերից և այլ ֆինանս. կազմակերպություններից	270,210	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	2,946,250
<b>Ֆինանսական գործունեությունից գուտ դրամական հոսքեր</b>	<b>270,210</b>	<b>2,946,250</b>
Արտարժույթի փոխանաման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(99,068)	(61,601)
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</b>	<b>6,567,315</b>	<b>5,944,821</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	5,944,821	-
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 9)</b>	<b>12,512,136</b>	<b>5,944,821</b>

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

### **1. Հիմնական գործունեությունը**

«Արդշինհիվեստբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2003թ. մարտ ամսին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2003թվականի փետրվարի 25-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 83 արտոնագրային համարով:

2003թ. ապրիլի 2-ից 2003թ. մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Բանկը ձեռք է բերել «Արդշինբանկ» ԲԲԸ-ի գործառնությունները:

2003թ. նոյեմբերի 6-ից 2003թ. դեկտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում Բանկը ձեռք է բերել «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի գործառնությունները:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 49 մասնաճյուղեր գտնվում են ՀՀ տարբեր մարզերում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան Գրիգոր Լուսավորիչի 13, 13/1:

Աշխատողների միջին թվաքանակը տարվա ընթացքում կազմել է 877 մարդ (2003թ.՝ 475):

### **2. Գործարար միջավայր**

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումները ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

### **3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

#### **Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում**

Հաշվապահական հաշվառման իր գրանցումները Բանկը վարում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ ՀՀ դրամ) և, կարգավորող մարմիններին ներկայացնելու նպատակով պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և Հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է տնօրեններից կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում: Սույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին, մաշվածությանը և ամորտիզացիային և այլ պահուստներին, որոնք բացահայտված են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան ծանոթագրություններում:

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Գնահատումները հիմնված են այն տեղեկատվության վրա, որը առկա է ֆինանսական հաշվետվություններին ներկայացման օրվա դրությամբ: Հետևաբար, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

### **Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Չաշխատող վարկերի և փոխատվությունների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են գործարքների կատարման պահին:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

### **Արտարժույթային գործառնություններ**

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով կիրառելով գործարքի օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են կիրառելով ՀՀ ԿԲ կողմից հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքը, որը 2004թ-ի դեկտեմբերի 31-ին կազմել է 485.84 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2003թ. 566 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց): Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության արտարժույթային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ հոդվածում:

### **Հարկեր**

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Բանկը՝

- ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարների հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք;
- մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ;
- հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այլ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ գործառնական ծախսեր» ծանոթագրությունում:

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

### **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոզիտացված գումարների) և այլ բանկերում ընթացիկ հաշիվներից (բացառությամբ այն գումարների, որոնց օգտագործման հնարավորությունը սահմանափակ է):

### **Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

### **Գանձապետական պարտատոմսեր և ֆիքսված եկամտաբերությամբ այլ արժեթղթեր**

Բանկի կողմից գանձապետական պարտատոմսերը և ֆիքսված եկամտաբերությամբ այլ արժեթղթերը դասակարգվում են երեք կատեգորիաների. առևտրական նպատակներով պահվող, մինչև մարման ժամկետը պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա: Ֆինանսական գործիքների ճանաչում

#### **- Առևտրական նպատակով պահվող արժեթղթեր**

Արժեթղթերը դասակարգվում են առևտրական նպատակներով պահվող, եթե նրանք ձեռք են բերվել գների կամ դիվերսիֆիկացիայի հավելագների կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով կամ կազմում են այնպիսի պորտֆելի մի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրական նպատակներով պահվող արժեթղթերը սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ ելնելով գործող շուկայական գներից: Համապատասխան իրացված և չիրացված բոլոր օգուտներն ու վնասները գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության առևտրական նպատակներով պահվող արժեթղթերից ստացված եկամուտներ հոդվածում:

#### **- Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր**

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսային մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

#### **- Վաճառքի համար մատչելի արժեթղթեր**

Ֆիքսված եկամտաբերությամբ արժեթղթերում այն ներդրումները, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխություններից, դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ ելնելով գործող շուկայական գներից: Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրական

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

արժեքի փոփոխություններին առաջացած իրացված և չիրացված շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին որպես իրական արժեքի վերագնահատման պահուստ: Երբ արժեթղթերը վաճառվում են, դրանց իրական արժեքի գծով ճշգրտումները ճանաչվում են որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերից շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Երբ առկա է օբյեկտիվ վկայություն, որ ներդրման գումարը արժեզրկված է, ապա կուտակված գուտ վնասը, որը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում, հանվում է սեփական կապիտալից և ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և ակտիվը հաշվեկշռում հաշվառվում է փոխհատուցվող գումարով, որն իրենից ներկայացնում է համանման ֆինանսական գործիքների համար օգտագործվող ընթացիկ շուկայական տոկոսադրույքի կիրառմամբ զեղչված ապագա դրամական միջոցների հոսք:

Երբ վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվների գծով առկա է կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ վկայություն, այդ ակտիվները վերադասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող: Սեփական կապիտալի իրական արժեքի վերագնահատման պահուստին մնան ակտիվների գծով նախկինում ուղղակիորեն վերագրված շահույթի ու վնասի գումարները մնում են սեփական կապիտալում մինչև համապատասխան ֆինանսական ակտիվի օտարումը, երբ վերջինի հետևանքով առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

### **Բաժնետոմսեր և ֆիքսված եկամտաբերություն չունեցող արժեթղթեր**

Առևտրական նպատակներով պահվող գնանշվող բաժնետոմսերի շուկայական գների փոփոխություններին առաջացած չիրացված շահույթն ու վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի գործարքներից և վերագնահատումից առաջացած շահույթ/(վնաս):

Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերում ներդրումները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ ելնելով գործող շուկայական գներից: Երբ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն որոշվել, բաժնետոմսերում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

### **Հետգնման պայմանագրեր**

Հետգնման պայմանագրերը Բանկի կողմից օգտագործվում են իր առևտրային գործունեության և դրամական միջոցների ընթացիկ կառավարման շրջանակներում: Նշված գործարքները դիտվում են որպես արժեթղթերի ապահովվածությամբ միջոցների ներգրավում:

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետգնման պայմանագրով ձեռքբերված արժեթղթեր դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հողվածներում:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն:

## ***Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ***

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են համապատասխան հետզնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

### **Վարձակալություն**

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

### **Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ**

Վարկերը և այլ փոխառվությունները հաշվեկշռում հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

### **Հնարավոր կորուստների պահուստ**

Ընդհանուր և հատուկ պահուստները ձևավորվում են թղթակցային հաշիվների, ներդրված ավանդների, դեբիտորական պարտքերի, տրամադրված վարկերի և այլ փոխառվությունների, ինչպես նաև Բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով կատարվող մասհանումների հաշվին:

Ընդհանուր պահուստը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով կատարվող մասհանումների հաշվին՝ ելնելով ակտիվների գծով ապագա, բայց դեռևս չբացահայտված կորուստների առաջացման հավանականությունից, ինչը գոյություն ունի ցանկացած բանկի վարկային պորտֆելում:

Հատուկ պահուստը ձևավորվում է վատորակ ակտիվների գծով կատարվող մասհանումների հաշվին՝ ելնելով ակտիվների գծով բացահայտված կորուստների առաջացման հավանականությունից:

Պահուստներ են ձևավորվում նաև սկզբնական արժեքով արտահայտված ներդրումների գծով՝ ելնելով դրանց տևական արժեզրկման հետևանքով հնարավոր կորուստների հավանականությունից:

Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերի և փոխառվությունների գծով պայմանագրային տոկոսային եկամուտը չի ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

Անհուսալի պարտքերի գծով դուրսգրումներն իրականացվում են հատուկ պահուստի հաշվին: Նախկինում դուրս գրված գումարների փոխհատուցման դեպքում վերականգնվում են համապատասխան պահուստները, որոնց ընդհանուր մեծությունը պարտադիր ճշգրտվում է հաշվետու ամսվա վերջին բանկային օրվա դրությամբ, և պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղվում են եկամուտների հաշվին:

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

### **Ոչ նյութական ակտիվներ**

#### **Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված ամորտիզացիայի տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրից և արտոնագրերից, որոնք հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով և ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ դրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, ինչը չի գերազանցում 10 տարին:

Այն ծախսումները, որոնք բարձրացնում կամ երկարացնում են համակարգչային ծրագրերի արդյունավետությունն ու շահագործումը՝ դրանց սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշներից, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ծրագրի սկզբնական արժեքին: Այս ծախսումները ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

#### **Գուդվիլ**

Ձեռք բերումների հետևանքով առաջացող գուդվիլն իրենից ներկայացնում է ձեռք բերման արժեքի այն մասը, որը գերազանցում է ձեռք բերված գուտ որոշելի ակտիվների իրական արժեքը: Գուդվիլի ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, ոչ նյութական ակտիվի ծառայության ժամկետի ընթացքում, որն ընդունված է 10 տարի:

#### **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1	100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալական պայմանագրի գործողության մնացորդային ժամկետի ընթացքում: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս

«Արդյունքներ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվում է գործառնական եկամուտներում:

### **Հատկացումներ սոցիալական ապահովության հիմնադրամին**

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը պետական սոցիալական ապահովության հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

### **Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ**

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով հնարավոր կորուստների պահուստի ստեղծման ընթացակարգը համապատասխանում է հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ընթացակարգին, որը նկարագրված է «Հնարավոր կորուստների պահուստ» բաժնում:

### **Համադրելի տեղեկատվություն**

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

## **4. Տոկոսային եկամուտներ և ծախսեր**

### **Տոկոսային եկամուտներ**

	2004թ.	2003թ.
Ընթացիկ հաշիվներ, վարկեր և ավանդներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում	71,856	21,750
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	3,052,115	1,127,185
Ներդրումներ	194,872	103,567
Հետգնման պայմանագրեր	15,446	11,276
Այլ տոկոսային եկամուտ	381	31
	<b>3,334,670</b>	<b>1,263,809</b>

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

**Տոկոսային ծախսեր**

Ընթացիկ հաշիվներ, վարկեր և ավանդներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	14,899	12,436
Հաճախորդների ժամկետային ավանդներ և ընթացիկ հաշիվներ	864,331	295,751
Հետզնման պայմանագրեր	5,152	2,271
	<b>884,382</b>	<b>310,458</b>

**5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ**

	2004թ.	2003թ.
Վճարներ փոխանցումներից	247,338	107,092
Կոմիսիոն վճարներ կանխիկացման գծով	793,312	300,338
Պետական և տեղական բյուջեի հետ հաշիվների սպասարկման գծով վճարներ	27,371	3,206
Վճարային քարտերով գործարքներ	9,710	1,727
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	182,505	112,272
	<b>1,260,236</b>	<b>524,635</b>

**6. Այլ գործառնական եկամուտ**

	2004թ.	2003թ.
Ակտիվների վերականգնում	630,951	300,995
Ստացված տույժեր	21,373	112,004
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից օգուտ	69,003	41,463
Այլ եկամուտ	83,337	37,535
	<b>804,664</b>	<b>491,997</b>

**7. Հնարավոր կորուստների պահուստներ**

	Ծանոթ.	2004թ.	2003թ.
<b><u>Բանկերում տեղաբաշխված ավանդների և քրթակցային հաշիվների գծով</u></b>			
Սկզբնական մնացորդ		12,125	-
Մասհանում պահուստին		40,706	12,125
Վերջնական մնացորդ	9;10	52,831	12,125
<b><u>Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով</u></b>			
Սկզբնական մնացորդ		151,878	-
Ձեռք բերման արդյունքում առաջացած մնացորդ		-	32,201
Մասհանում պահուստին		124,497	129,168
Նախկինում դուրս գրված գումարների վերադարձ		74,872	-
Պահուստի օգտագործում		(116,843)	(9,491)
Վերագնահատման զուտ արդյունք		(197)	-
Վերջնական մնացորդ	11	234,207	151,878

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

**Այլ ակտիվների գծով**

Սկզբնական մնացորդ		6,459	-
Մասհանում/(փոխհատուցում) պահուստին		(12,830)	105,792
Նախկինում դուրս գրված գումարների վերադարձ		10,636	-
Պահուստի օգտագործում		(1,798)	(99,333)
Վերագնահատման զուտ արդյունք		(20)	-
Վերջնական մնացորդ	15	2,447	6,459

**Հետհաշվեկշռային հոդվածների գծով**

Սկզբնական մնացորդ		21,057	-
Մասհանում պահուստին		1,697	21,057
Վերագնահատման զուտ արդյունք		19	-
Վերջնական մնացորդ	21.2	22,773	21,057

<b>Ընդամենը մասհանումներ</b>		<b>154,070</b>	<b>268,142</b>
------------------------------	--	----------------	----------------

**8. Այլ գործառնական ծախսեր**

	2004թ.	2003թ.
Անձնակազմի գծով ծախսեր	1,065,792	367,233
Հատկացումներ սոցիալական ասպահովագրության հիմնադրամին	134,857	50,847
Մաշվածություն և ամորտիզացիա	264,405	73,332
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	100,507	43,795
Գործուղման ծախսեր	21,575	19,330
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	115,052	52,766
Նյութական ակտիվների վերանորոգման և պահպանման ծախսեր	33,732	14,039
Գրասենյակային ծախսեր	15,942	4,894
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	194,142	57,846
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	188,622	13,584
Անվտանգության գծով ծախսեր	85,547	29,887
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	163,670	77,375
Վճարված տուգանքներ	5,751	-
Այլ ծախսեր	313,548	189,315
	<b>2,703,142</b>	<b>994,243</b>

**9. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում**

	2004թ.	2003թ.
Կանխիկ դրամական միջոցներ	3,085,890	2,250,820
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	34,514	-
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	3,143,168	2,040,823
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	1,000,000	-
<b>Ներառվում է դրամական հոսքերի մասին հաշվետվությունում</b>	<b>7,263,572</b>	<b>4,291,643</b>
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(345)	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	151,562	52,576
Հաշվեգրված տոկոսներ	1,337	1,086
<b>Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում</b>	<b>7,416,126</b>	<b>4,345,305</b>

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Կանխիկ դրամական միջոցներ և թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	7,263,572	4,291,643
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ (ծանոթ. 10)	5,248,564	1,653,178
<b>Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</b>	<b>12,512,136</b>	<b>5,944,821</b>

